

կու տեսողացն : Չայս ուսաք ի բազում գրոց յիշատակարանաց եւ յարձանաց ի բազում տեղիս» («Պատմութիւն», Վաղարշապատ, 1870, էջ 30, Գ Մաս) :

Սակայն Համազասպ Եպիսկոպոսի տրուած Յովհաննաւանքի առաջնորդութեան ՉԻԸ (1279) թուականը պէտք է սրբադրել, քանի որ իր մասին իբր առաջնորդ յիշատակագրութիւն ունինք ՉԻԳ (1274) թուականէն, որ զրտած եւ առաջին անգամ ըլլալով հրատարակած է վաստակաւոր Փրոֆ. Կարօ Ղաֆազարեանը. ան արձանագրութիւնը գտած է յիշեալ վանքին ժամատան մէջ, հարուային պատին վրայ, բարձր կամարին մէջ : Արձանագրութեան մէջ կը կարդացուի ի միջի ալոց. «...եւ առաջնորդ ս(ր)բոցս տ(է)ր Համ(ազասպ) :...» («Յովհաննաւանք եւ նրա արձանագրութիւնները», Երևան, 1948, արձ. թիւ 56, տող 4) : Հոն է նաեւ 1279էն արձանագրութիւնը, ուր կ'ըսուի. «Եւ սպասաւորք ս(ր)բոցս տ(է)ր Համ(ազասպ) եւ այլ եղբարքս...» (Անդ, թիւ 57, տող 6) : Տեսնաք նաեւ որ նոյն վանքին մէկ ուրիշ արձանագրութեան մէջ «Սորիշահ յազգէ Մամիկոնեանց» իր որդի իշխանաց իշխան Քրդի եւ կնոջ Վաչէի ՉԻԲ (1283)էն դարձեալ կը յիշուի. «Եւ առաջնորդս ս(ուր)ր ուխտիս տ(է)ր Համազասպ» (Անդ, թիւ 30) :

ՉԻԵ (1286)էն մեզի հասած է Երեւանի թիւ 1418 Ժողովածուն, ուր կը յիշատակագրուի. «Գրեցաւ մեկնութիւն հանդուտեան Յովհաննու աւետարանչի աստուածարանի եւ սիրեցելոյն Յիսուսի ի թիւս ՉԻԵ (1286) եւ արդեամբք սրբազան Եպիսկոպոսին տէր Համազասպայ, յիշատակ անջինջ յաւիտեանս : Արդ որք աւգտիք եւ լուսաւորիք ի սորա լուսալրութենէ յիշեսջիք զսրբասնե(ա)լ զերջանիկ սուրբ Եպիսկոպոս զտէր Համազասպ... (Երեւանի ձեռագիրներուն յիշատակարաններուն օրինակութիւնը կը պարտինք շնորհակալութեամբ գիտաշխատող Արտաշէս Մամիկոնեանի) :

Չաքարիա Սարկաւազի կը պարտինք ՉԻԶ (1288)էն արձանագրութեան մը արտագրութիւնը «ՅՕչականու եկեղեցւոյն ի հիւսիսորմն», ուր կ'ըսուի. «Ի թուիս ՉԻԶ (1288) : Յառաջնորդութեան Տէր Համազասպայ, եւ ի պարոնութեան Մահմադինինի...» («Պատմութիւն...», 1870, էջ 27) : Ան կու տայ Յովհաննաւանից մէկ անթուական յիշատակարանն ալ, ուր կը յիշուի «Եւ տէր Համազասպ, եւ եղբարքս...», որ անշուշտ Տէր Համազասպ Մամիկոնեանի մասին է : Այս արձանագրութիւնը դետեղուած է Աւագ պարոնին եւ Թաքան խաթունին Չանխաթուն դուստրէն (Անդ, էջ 26) :

1288էն է Երեւանի թիւ 316 ձեռագիր «Մեկնութիւն Գործոց Առաքելոց ի Յովհաննէ Ոսկեբերանէ», որուն յիշատակարանը կ'ըսէ. «Փառք... Որ եւ տէր Համազասպ մեծապատիւ եւ առաքելաշնորհ արհեպիսկոպոս վերադիտող տանս Այրարատու, եւ մեծ մենաստանիս վանից Յովհաննու, ցանկացող եղել այսմ աստուածաին մատենագիրս, եւ ետ զրել զսա ի հալալ արդեանց, ի վայելումն երկար կենդանութեան իւր եւ բարի մնացելոց առ Քրիստոս հանդիսա եւ ողորմութիւն յերկնից արքայութեանն :

«Արդ ով որդիք լուսոյ, որ փափագէք կենդանի ջրոյն եւ լնոյք զփափագ տենջման ձեր ի սուրբ կտակես, յիշման բարոյ արժանի արարէք զպատուեալն յաստուծոյ եւ մարդկանէ զտէր Համազասպ եւ զամենայն ընտանիււրն իւր, զազգայինսն Մամիկոնեան զմիջինսն եւ զվերջինսն, զառաջինսն եւ զարեն մեծաւորսն զկենդանիս եւ զգնացեալսն առ Քրիստոս. կենդանեացն բարի եւ երկար ժամանակ, եւ բարի զնացելոցն յարութիւն կենաց, ի տեսունէ Յիսուսէ աստուծոյ մեր :

«Եւ ես իսկ տրուպ եւ փծուն զրիշս ծառայ աստուծոյ Կարապետս խնդրել ի ձենջ, խնդրել ի տեսունէ թողութիւն յանցանաց ինձ եւ իմոց ամե-